— Ցանուն վիճ. Կոնսիստ. Վրաստ. և Իմէրէթի զկարգմանէ Գեր. Անանիա եպս. ի ի Գանձակ. Թ. 460։

— Ցանուն Գեր. Տ. Թեմակալին Վրաստանի և Իմէրէթի Գէորգ Արքեպս.-ի, յաղագս հրաւիրելոյ ի ժողով զրաժնեռեարս կալուածոյն Մարցայ և առաջարկելոյ նոր բաժանումն. Թ. 463։

— Ցանուն յիշեալ Արքեպս.-ի, որով յայտնեցաւ նմա կարգումն Գեր. Անանիա եպիսկոպոսի ի Գանձակ և փոխադրութիւն փոխանորդին Գանձակայ Տ. Բագրատ վարդապետի ի Տփխիս. Թ. 466։

Հայրապետական պարգեւք.

Շնորհեցան Կոնդակք Հայրապետականք յաղագս կրելոյ զլանջխաչս քահանայականս Բարեկ. քահանայիցն՝ Յովհաննու Տաթև գեղջ, Խորենայ Գօրիս աւանի, Ներսէս, Ղևոնդ և Սեդրակ քահանայից Աստրախան քաղաքի. Գէորգ քահ.-ի Շուլավէր գեղջ. Թ. Թ. 368։ 369։ 371։ 372։ 373 և 383։

Շնորհեցան Կոնդակք յաղագս կրելոյ զզլխարկն կամիլաւկայ՝ Արժ. Սարգիս քահ.-ի Թաթոսիզեան Քիշնև քաղաքի և Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան Ս. Պետերբուրգ մայրաքաղաքի. Թ. 375։ 376։

Շնորհեցաւ Կոնդակ ընդ պատուոյ Աւագ քահանայութեան անդամոյ Կոնսիստ. Երևանայ Արժ. Գրիգոր քահ. Սուքիասեան. Թ. 367։

Շնորհեցան Կոնդակք յաղագս կրելոյ զլանջխաչ վարդապետական այցելու հովուին Պուլկարիոյ Բարձր. Տ. Բարդուղիմէոս Ծ. վարդապետի Պաղճեան և վանահօր Թէլէթ ուխտատեղւոյն, Տ. Դիոնէսիոս վարդապետի. Թ. 381 և 398։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն հոգաբարձութեան Ս. Փրկչեան Աղգ. Հիւանդանոցի Կ. Պոլսոյ Թ. 348։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Միքայէլի Միքայէլեանց ի Մոսկուայ, յաղագս նուիրելոյ նորա զարձան մի Վեհ. Հայրապետին, յաւուր 80 ամեայ տարեդարձի ծննդեան նորին. Թ. 409։

— Ցաւակցական և մխիթարական յանուն իշխանուհի Մարիամու Երկայնաբազուկ —Արդութեան, յաղագս մահուան մ'ին և երկուց եղբարց նորա. Թ. 420։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունուար. 14. Նորին Սրբութեան բարեհաճ տնօրէնութեամբ վանական կառավարութեան անդամ նշանակուեցաւ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեան։

Փետր. 7. Ս. Սինոդն հրամայեց Շամախու կոնսիստորիային երկու ամիս ժամանակով Սահակ քահանայ Մակարեանցին ապաշխարելու ուղարկել Սաղեանի ս. Ստեփաննոս վանքը՝ իւր կատարած օրինազանցութեանց պատճառով, և այդ մասին տեղեկութիւն տալ Սինոդին։

Փետր. 9. Սինոդը հրամայեց Երևանի կոնսիստորիային հրամանագրել ստորագրեալ հոգևոր կառավարութիւններին և գործակալներին, որ այսուհետև բոլոր եկեղեցիներումն ալ կան աւելի քան երկու միաբան քահանաներ՝ պատարագ անեն «յայտնի» և «վաստակաւոր սրբոց» տօներին։



ԿՐՕՆԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ.

«Յորժամ ակնսցէ Նա՝ Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ զձեզ ամենայն ճշմարտութեամբ»։

Յովհ. ԺԶ. 13։

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՆ այս խօսքերը լսելիս չէին մտածում ամենևին, թէ, ինչպիսի մեծ բան, ինչ անսահման բարիք է խոս-